«Յունիբանկ» ԲԲԸ Խորհրդի 06.09.2023թ. որոշման համաձայն, ավանդի ներքոնշյալ պայմանները գործել են մինչև 25.09.2023թ.:

Տեղեկատվական ամփոփագիր		
Ավանդի հիմնական պայմանները		
Ավանդատեսակի գործողության ժամկետն է		*01.06.18 – վերջնաժամկետ չի սահմանվում*
Ավանդի ներդրման արժույթը		ՀՀ դրամ
Ավանդի ներդրման նվազագույն գումարը		100,000
Ավանդի ներդրման ժամկետը	**Տոկոսների վճարման կարգը**	Տարեկան տոկոսադրույք
Առավելագույնը 6570 օր (18 տարի)	**ժամկետի վերջում**	9.5%*
*Տարեկան տոկոսադրույքը կարող է վերանայվել Բանկի կողմից յուրաքանչյուր տարի:		
Ավանդի առավելագույն գումարը		100,000,000
Ավանդի տեսակը		• Ավանդը նախատեսված է ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար, ովքեր հանդիսանում են պետության կողմից «դրամագլուխ» ստացած երեխայի ծնողը կամ օրենքով սահմանված կարգով խնամակալը: • Պարտադիր պայման է ավանդը երեխայի անունով ձևակերպելը, իսկ ծնողին կամ խնամակալին՝ որպես երրորդ անձ:
Գումարի համալրման հնարավորություն ՝ այո Տոկոսների կապիտալացում չի իրականացվում:		
Մասնակի հետկանչման հնարավորություն ՝ այո , սակայն միայն հետևյալ նպատակների համար . 1. երեխայի ծնողի կամ խնամակալի հիփոթեքային վարկի վճարման համար 2. Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված ուսումնական հաստատության վարձավճարի համար /երեխայի ընտանիքի անդամի/ 3. երեխայի ընտանիքի անդամի առողջության ապահովագրության վճարի համար:		
Ավանդը կարող է ամբողջությամբ հետկանչվել ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գրավոր պահանջով :		
Բոլոր ավանդատուներին տրամադրվում է նվեր՝ UNIPAY կոմունալ վճարումների միասնական համակարգի քարտ:		

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Սակագներ և տուժանքներ

1. Ժամկետային ավանդի հաշվի սպասարկումն իրականացվում է բանկային հաշիվների միջոցով: Եթե հաճախորդը «Յունիբանկ» ԲԲԸ-ում չունի բանկային հաշիվներ, ապա դրամային ժամկետային ավանդ ներդնող ավանդատուի համար Բանկը բացում է բանկային հաշիվ ՀՀ դրամով, իսկ արտարժույթով ժամկետային ավանդ ներդնելու դեպքում բացի արտարժութային բանկային հաշվից, բացվում է նաև ՀՀ դրամով բանկային հաշիվ:

2. Ընտանեկան դրամագլխի գումարների ստացման համար բացվող հաշիվների համար սպասարկման վճար չի գանձվում:

Ավանդային հաշվի քաղվածքների և դրանց կրկնօրինակների տրամադրումն առանց ժամկետի սահմանափակման իրականացվում է անվճար: Բանկն իրավասու է միակողմանիորեն փակելու հաճախորդի բանկային հաշվեհամարը, եթե հաճախորդը չի ապահովել Բանկի սակագներով սահմանված սպասարկման վճարները, չնվազող մնացորդը և/կամ 1 տարուց ավել գործարքների չի իրականացրել:

3. Ավանդատուի պահանջով ավանդային պայմանագրի վաղաժամկետ խզման դեպքում.

ա/ ավանդի գումարից գանձվում են արդեն իսկ վճարված տոկոսագումարները, եթե ժամկետային ավանդի պայմանագրով սահմանված է տոկոսների ամենամսյա վճարում,

բ/ չի վճարվում ավանդի գումարի նկատմամբ հաշվեգրված տոկոսագումարը, եթե ժամկետային ավանդի պայմանագրով սահմանված է տոկոսների վճարում ժամկետի վերջում:

4. Բանկային ավանդի պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվում է ավանդի պայմանագրով սահմանված դեպքերում և կարգով: Եթե ավանդատուն ավանդի ժամկետի ավարտից հետո չի պահանջում վճարել ավանդի գումարը, ապա ըստ պայմանագրում կատարված նշումի՝ կամ երկարաձգվում է պայմանագրի գործողության ժամկետը պայմանագրով սահմանված պայմաններով և երկարաձգման պահին բանկում գործող տոկոսադրույքով, կամ ավանդի գումարը փոխանցվում է ավանդատուի բանկային հաշվին, որի նկատմամբ կիրառվում են բանկային հաշվի համար նախատեսված պայմանները: Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց արտարժույթով բանկային հաշիվների մնացորդների նկատմամբ հաշվարկվում է 0%, իսկ ՀՀ դրամով բանկային հաշիվների մնացորդների նկատմամբ՝ 0% տարեկան դրույքով՝ բանկում ներդրված փաստացի ժամանակահատվածի համար: Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց արտարժույթով բանկային հաշիվների մնացորդների նկատմամբ հաշվարկվում է 0%, իսկ ՀՀ դրամով բանկային հաշիվների մնացորդների նկատմամբ՝ 0% տարեկան դրույքով: Բանկն իրավունք ունի փոփոխել բանկային հաշիվների մնացորդների նկատմամբ հաշվարկվող

տոկոսադրույքը՝ Յունիբանկ ԲԲԸ Խորհրդի կողմից հաստատված դրույքների և սակագների համաձայն, եթե այլ բան նախատեսված չէ բանկային հաշիվների սպասարկման պայմանագրով:

5. Ավանդատուի հաշվին Ավանդատուի անունով կարող են մուտքագրվել նաև երրորդ անձանցից ստացված դրամական միջոցներ՝ նրա ավանդի հաշվի մասին անհրաժեշտ տվյալների նշումով:

6. Ավանդային հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են Անվանական տոկոսադրույքի հիման վրա:

7. Տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, այն տոկոսը, որն ավանդատուն կստանա 1000 դրամ ավանդի դիմաց 365-օրյա ժամանակահատվածի համար տարեկան պարզ տոկոսադրույքի կիրառման և տոկոսների կապիտալացման ու վճարման հաճախականության հետևանքով: